



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ ԵՂԵԳՆԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔ

ՀՀ Վայոց ձորի մարզի Եղեգնաձոր համայնք

22-ը դեկտեմբեր 2023թ.

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 16 ԱՎԱԳԱՆՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ

Համայնքի ավագանու նիստին ներկա էին ավագանու 13 անդամներ:

Բացակա էին՝ Ծովինար Հովհաննիսյանը, Նեկտար Հովհաննիսյանը, Կարեն Մանասերյանը, Սոնա Մարգարյանը, Մուշեղ Ներսիսյանը, Մարատ Շահբազյանը, Սամվել Ոսկանյանը, Վահե Վարդանյանը

Ավագանու նիստին մասնակցում էին՝

Համայնքի ղեկավարի օգնական Գառնիկ Խաչատրյանը, աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման բաժնի պետ Հայկանուշ Ավագյանը, քաղաքաշինության, հողաշինության, գյուղատնտեսության և բնապահպանության պետ Արմեն Աղաջանյանը, աշխատակազմի գլխավոր մասնագետներ Քրիստինե Պողոսյանը և Անի Հասրաթյանը:

Նիստը վարում էր համայնքի ղեկավար՝ Դավիթ Հարությունյանը

Նիստն արձանագրում էր աշխատակազմի քարտուղար՝ Մարինե Հովհաննիսյանը

Լսեցին.

ԵՂԵԳՆԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2023 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 22-Ի
ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Ձեկ. ԴԱՎԻԹ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 4-րդ մասի պահանջով՝ **ավագանին ո թ ո շ Ե Գ**.

1. Հաստատել Եղեգնաձոր համայնքի ավագանու 2023 թվականի դեկտեմբերի 22-ի հերթական նիստի հետևյալ օրակարգը.

1) Եղեգնաձոր համայնքի ավագանու 2023 թվականի դեկտեմբերի 22-ի հերթական նիստի օրակարգը հաստատելու մասին:

2) Դրամական օգնություն տրամադրելու մասին:

3) Եղեգնաձոր համայնքի 2024 թվականի բյուջեի նախագծի քննարկման մասին:

4) 2024 թվականի համար Եղեգնաձորի համայնքապետարանի աշխատակազմի կառուցվածքը, աշխատակիցների քանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին:

5) Եղեգնաձոր համայնքի տարածքում աղբահանությունը օպերատորի կողմից իրականացնելու մասին:

6) 2024 թվականի համար Եղեգնաձոր համայնքի ենթակայությամբ գործող համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների աշխատակիցների քանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին:

7) Համայնքային սեփականություն հանդիսացող բնակավայրերի նշանակության հողը մրցույթային կարգով կառուցապատման իրավունքով տրամադրելու մասին:

8) Համայնքային սեփականություն հանդիսացող հողերից աճուրդով օտարելու մասին:

9) Եղեգնաձոր համայնքի 2023 թվականի բյուջեում փոփոխություններ կատարելու մասին:

10) Եղեգնաձոր քաղաքի զբոսայգիների էսքիզային նախագծերին հավանություն տալու մասին:

11) Եղեգնաձոր համայնքի ավագանու հերթական նստաշրջանի հերթական նիստի գումարման օրը որոշելու մասին:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Կողմ-13	Դեմ-0	Ձեռնպահ-0
---------	-------	-----------

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 131-Ա/

Լսեցին.

ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Ձեկ. ՔՐԻՍՏԻՆԵ ՊՈՂՈՍՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ և 7-րդ կետերով, հիմք ընդունելով Եղեգնաձոր համայնքի ավագանու 2022 թվականի ապրիլի 12-ի թիվ 37-Ն որոշմամբ հաստատված կարգի 24-րդ, 43-րդ կետերը և համայնքում սոցիալապես

